Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

14.01.2016թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **8944**

որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	22	0.2
դիմում	6902	77.1
բողոք	2020	22.5
կրկնակի	307	3.4
կոլեկտիվ	3	0.03

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **262**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	95	36.2
բողոք	167	63.7

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	50	0.5
կոմունալ-կենցաղային	18	0.2
շինարարական	9	0.1
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	2	0.02
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	215	2.4
առողջապահության	43	
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	691	7.7
օրենսդրական	55	0.5
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	301	3.3
ապարատային		
այլ հարցեր	7558	84.5

սեփականաշնորհում	2	0.02

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 8944 նամակներից մոտ 0.2%-ը եղել են առաջարկություններ : Բողոքները կազմել են շուրջ 22.5%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 77.1%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 7.7%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 3.3%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).

- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.5%-ը առնչվում է բնակարանային, 0.2%-ը կոմունալ-կենցաղային, 0.1%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 84.5% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 8879-ին տրվել է գրավոր: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 65-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: